ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի §Պ. Սևակի միջնակարգ դպրոց¦ ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19 դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (8 ժ), երաժշտություն (8 ժ), ֆիզիկա (13 ժ), մաթեմատիկա (37 դասաժամ), ռուսաց լեզու (7 ժ), շախմատ (5 ժ) և կերպարվեստ (8 ժ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

ö³ëï³ÃÕÃ»ñÝ ÁÝ¹áõÝíáõÙ »Ý ëáõÛÝ Ñ³Ûï³ñ³ñáõÃÛ³Ý Ñ³å³ñ³ÏÙ³Ý ûñí³ÝÇó՝ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{-00}-ից 15^{-00}-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Արարատի մարզի Պ. Սևակի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Պարույր Սևակ, 3-րդ փ., 1-ին շ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 50-12-02 հեռախոսահամարով: